№ 111 ՅՈՒԼԻՍԻ 5 (17) 1878 ՅՈՒԼԻՍԻ 5 (17) № 111

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1878 թվից

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերից։

Լրագրի գիրքը և պրոգրամմեան նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ։ Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ։

ՌՈՒՆԶԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ոչինչ յայտնի չէ։—Ներքին տեսութիւն։ Նամակ Շամախուց։ Նամակ Ղարսից։ Նամակ Շուշուց։ Նամակ Զարդախլուից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Տեղեկութիւններ կօնդրէսից։ Ամերիկա։ Ֆրանսիա։ Սպանիա։ Աւստրիա։ — «Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։ — Տեղեկագրոյց։

ՈՉԻՆՉ ՅԱՅՏՆԻ ՉԷ

Ինչպէս է վճռվել հայոց խնդիրը կօնդրէսում,—մեզ ոչինչ յայտնի չէ։ Դորա մասին հեռագիրները ոչինչ չեն հաղորդում։

Անհաւատալի է որ Թիւրքաց հայերի ներկայացրած հումեատ պահանջներն էլ կօնդրէսը չընդունի։

Գուցէ ռուսաց «Голосъ» լրագրի խօսքերը ուղիղ են, որ եթէ հայերի պահանջները արդեւք կը գտնեն, այդ արդեւքը նոքա կը գտնեն միմիայն Անգլիայի կողմից։

Այդ նախագուշակութիւնը մասամբ հաստատում են անգլիական «Morning Post» լրագրի խօսքերը։ Այդ լրագիրը լսել է որ Անգլիայի դիտաւորութիւնները առհասարակ Փոքր-Ասիայի և մասնաւորապէս Հայաստանի վերաբերութեամբ հետևեալ են։

Անգլիան կամենում է բաժանել տալ ամբողջ Փոքր-Ասիան տասն և հինգ առանձին նահանգների վրա և նշանակել տալ այդ բոլոր նահանգներում, նոյնպէս և Հայաստանում, անգլիացի նահանգապետներ....

Եթէ այդ լուրը ուղիղ է և եթէ այդ տեսակ դիտաւորութիւնը կաջողվի Անգլիային, այն ժամանակ Անգլիան կը դարձնէ ամբողջ Փոքր-Ասիան և մանաւանդ Հայաստանը մի երկրորդ Հնդկաստան։ Նա կը պահէ տնտեսական ստրկութեան մէջ բնիկ ժողովուրդը, կը հարստահարէ նրան։ Հայերին, և առհասարակ բնիկներին կը դարձնէ օրական մշակներ, ինչպէս արել է Հնդկացիների հետ, իր ձեռքը կը գցի Հայաստանի հանքերը, ջրերը, անտառները, բնական հարստութիւնները, կը դարձնէ ամբողջ Փոքր-Ասիան իր համար մի գործարան,—իսկ երբ որ աղքատացած բնիկների մէջ սով կընկնի, Անգլիան իրան մեծահոգի և առատաձեռն ցոյց կը տայ և կը բաժանէ ամբոխին հաց և փող....

Մի՞թէ Թիւրքիայի հայերը դեռ հաւատում են Անգլիայի կեղծաւոր և նենգաւոր քաղաքականութեանը։

Զը մոռանանք ինչ է արել Անգլիան Հնդկաստանի հետ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

28 յունիսի

Անդադար գանգատները կենսական պահանջների, ամենօրեայ սովորութիւն են դառած այժմ մեր քաղաքի համար։ Ալլաֆների հարստահարութիւնը, հացի սղութիւնը, արաղի և գինու թանգութիւնը, փայտի պակասութիւնը այժմ մի մի մարմնացած անբաւականութիւն են դարձրել մեր քաղաքացիներից իւրաքանչիւրին. մանաւանդ փայտի պակասութիւնը որ ինչպէս ասում են բոլորովին զահրումար է դարձած մեզ համար։

—Գինի, արաղը թանգ է չեմ խմի, ասում է մեր քաղքցին։

—Ալիւրը սուղ է, բայց միշտ գտնվում է ասում է միւսը։

—Ալլաֆը հարստահարող է, ջանը դուրս գայ. վրա է բերում երրորդը։

—Բայց ինչ անենք փայտի համար, որտեղից գտնենք փայտ, բացականչում են բոլորը, փայտը ոչ սուղ է որ մի կերպով կարողանայինք ձեռք բերել, ոչ հարստահարող ալլաֆի ձեռքին է գտնվում, որ հազար ու մի սուտ փաղաքշանքով, կեղծաւորութեամբ կարողանայինք պոկել նրանից, ուրեմն ինչ պիտի արած։

—Ի՞նչ պիտի արած, փայտի սով է ընկել մեր քաղաք, վկայում են բոլորը միաձայն։

Փայտի սով. հա, հա, հա, այդ էլ չէինք լսած, գուցէ կասեն շատերը մեր ընթերցողներից ծիծաղից թուլանալով, իսկ մենք կը կրկնենք այո փայտի սով, և մեր քաղաքացիք ամենագեղեցիկ փաստերով կարող են ապացուցանել թէ ինչքան անտանելի է փայտի սով։ Երևակայեցէք ձեզ մի խեղճ ընտանիք, նա անտանելի աշխատանքով ձեռք է բերել մի փոքր ալիւր, ալիւրը և ուտելու պտորժակը պատրաստ են, բայց երեխայքը սոված են և հաց են պահանջում, նրանց բերանի ջուրը առատօրէն վազում է և աչքերը փայլակին են տալիս ամանի միջի ալիւրը նկատելով։ Բայց արի տես նրանց դրութիւնը՝ երկու շաբաթ է ահա փայտ չունենալու պատճառով աչքերի տեսութեամբ են միմիայն բաւականանում ալիւրը ուտելու, բերանով ուտել չեն կարող, հում է, փայտ էլ չը կայ որ եփեն, պարաք անել էլ չեն կարող, որովհետև հարևանները ևս մի և նոյն ախտին են ենթարկված, տան փթած, հին, անպէտք կօճերի կամ բակի ծառերի վրա է անկարելի է յոյս կապել, որովհետև նրանք վաղուց են այդ յոյսի համար նահատակվել, փայտակոյտի վրա։

Բայց ինչու այդ դրութեան է ենթարկվել ձեր քաղաքը, գուցէ հարցնեն շատերը մեր ընթերցողներից, չը լինի թէ մորեխը ոչնչացրել է անտառները, կամ մի՞թէ անտառներ չունէ ձեր քաղաքը, չունէք անտառապետ, ինչու չէ հայ թայթում նա ձեր կենսական պահանջը։

Այո՛ ունենք մենք անտառներ, ունենք և անտառապետ, բայց թէ ինչու էլի փայտի նեղութիւն ենք կրում, այդ մասին բացատրութիւն տալը շատ դժուար չը պիտի լինի մեր քաղաքացիներին. ահա թէ ինչն է պատճառը։ Անտառները պահպանվում են օբեչչիկներով, որոնք նշանակվում են անտառապետից. այդ օբեչչիկների վրա մինչև այժմ բաւական խիստ հսկողութեամբ էին վարվում, նրանց չեղած իրաւունքները (որը այժմ այնքան աղդու կերպով գործադրում են) այնքան սահմանափակված էին, որ նրանք ոչ մի կերպով չէին կարողանում հարստահարել այն փայտ կտրող գիւղացիները, որոնք անտառապետից իրաւունքի տոմսակ ստանալով, փայտը կտրում էին անտառում և բերում քաղաքում ծախելու։ Բայց այժմեան անտառապետ պ. Մարդանովի ժամանակ կարծես այդ հսկողութիւնը թուլանալով, նրանք վարվում են գիւղացիների հետ այնպէս, ինչպէս իրանք են կամենում։ Նրանք ունեն բոյներ քաղաքի այն կողմերում որտեղից գիւղացիք անցուցանում են իրանց փայտի բեռները. դարան մտնելով այդ բոյների (որին իրանք անուանում են պաշտօնական դիտարան) մէջ, նրանք յանկարծ աւաղակի նման յարձակվում են բոլոր այն սայլերի վրա, որոնք բեռնաւորած են լինում փայտերով և առանց հարցնելու թէ գիւղացին ունէ արդեօք տոմսակ անտառապետից առած թէ ոչ, սկսում են ծեծել. չարչարել գիւղացուն մինչև որ չեն ստանում նրանից մի քանի ռուբլ. շատ ժամանակ եթէ գիւղացին այնքան արիասիրտ է լինում, որ համարձակվում է ցոյց տալ իր իրաւունքի տոմսակը, նրանք առնում և պատառում են այդ տոմսակը և մէկին երկու խլելով խեղճ գիւղացուց արձակում են նրան։ Պատահում է որ փայտ բերող գիւղացու տոմսակը իր ընկերի կամ եղբօր ձեռքն է լինում, որ մի քառորդ վերստից հետևում է իրան, նա խնդրում է որ թոյլ տան իրան սպասել մինչև եղբօր գալը տոմսակը առնելու նրանից, բայց պ. պ. օբեչչիկները առանց նայելու նրա խօսքի ստուգութեան, ծեծելով, հայհոյելով, Սիբիրով, տաժանակիր աշխատանքով ահ տալով բերում են քաղաք, փայտը դատարկելուց, գիւղացու պարկերը, կացինը, ձիու կամ տաւարի ծածկոցը առնելուց յետոյ, մի քանի մտրակի հարուածներով դատարկ ձեռքով յետ են դարձնում նրան։ Քաղաքի որ կողմը գնաք, ամեն տեղ դուք կը նկատէք այդ տխուր տեսարանը, իր բազմակողմանի երևոյթներով։

Միամիտ գիւղացուն յայտնի չէ ոչ մի տեղ որ նա կարողանար արդարութիւն որոնել այդ բռնաբարութեան դէմ, նա իր օրէնքը, արդարութիւնը, դաղաստանը, դատաւորը, անտառապետը, բոլորը այդ չնչին, ստոր, մարդկութեան աղճատված ապականված տիպարի՝—օբեչչիկի մէջն է նկատում։ Նա կարծում է որ բոլոր իրաւունքները միմիայն նրա ձեռքին են գտնվում և թէ նա իրաւունք ունէ իր կամքի համաձայն վարվել իր հետ, նա նրա գլուխը մացրել է որ եթէ նա գնայ գանգատվի, առանց հարցնելու նրան Սիբիր կուղարկեն։

Ամենայն տեղից ճարը կտրված և մի և նոյն բռնաբարութեան կրկնութիւնների փորձը մի քանի անգամ առած լինելով խեղճ գիւղացին բոլորովին յուսահատվում է։

—Էլ սրանից յետոյ ոչ փայտ կը տանեմ քաղաք և ոչ էլ այդքան ծեծ կուտեմ, ասում է նա և գնում է ուրիշ գործի։

Բայց թէ ինչ պիտի անեն քաղաքացիք առանց փայտի, այդ պարոն օբեչչիկների վերաբերեալ գործ չէ, նրանց գործն է միայն ուշադրութեամբ զննել թէ ինչպէս իրանց գրպանները թեր են առնում, կամ ինչպէս ասում են փարվազ են լինում. նրանք ունեն դեռ ևս շատ որսեր, որոնք անշուշտ չեն կարող խուսափել իրանց նետի ուղղութենից, հասատացրած են բաւականի իրանց կաչինները—էլ նրանց օլում չը կայ։ Մտէք նրանց տուն և տեսէք թէ որքան գիւղացու բեռնի տոպրակներ, որքան կացիններ դուք կարողէք գտնել նրանց տան, որոնք հէնց առանձնապէս մի չարչիի կապիտալ կարող էին կազմել։

Ահա թէ ինչն է պատճառը, որ փայտի սով է այժմ մեր քաղաքում։

Ա. Զախարեանց

ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

28 յունիսի

Ղարս քաղաքը ռուսաց կառավարութեան ձեռքը անցնելուց յետոյ բոլորովին նոր կերպարանք առաւ և օրից օր սկսվում է բարեկարգվել ընտրեալ կառավարութեան ջերմ աշխատութեանը։ Փողոցների սալայատակների խանգարված տեղերը նորոգել են և չօսսէ են լինում մեծ փողոցների վրա, ամեն յարմարաւոր տեղում և փողոցների անկիւններում արտաքնոցներ են շինում, որոնց պակասութեան պատճառով ամեն տեղ ապականված էր, գիշերները լամպաներով լուսաւորված են բոլոր շուկաները և փողոցները. շատ վաղուց չէ շինվեցաւ հասարակաց զբօսարան և այն պարտէզում երեկոները հընչվում են նուագարաններ պարահանդէսներ են լինում։ Տաճիկները զարմանում են ռուսաց աշխատող և բարեկարգող ձեռքերի վրա։

Վաճառականութիւնը լաւ դրութեան մէջ է, որը մեծ մասամբ օտարաքաղաքացիների ձեռքն է. ամենից շատ լցված են Ալէքսանդրապոլցիք, որոնց ձեռքին են մեծ և ապրանքով հարուստ խանութները, բաղանիները և հիւրանոցները, իսկ մկիրտանների և խոհանոցների թիւը չը կայ։

Զգալի պակասութիւն [կայ մանր] փողի, որի պատճառով թէ վաճառողը և թէ գնողը բաւականին վնաս են կրում։ Խղճահարվում է մարդ տեսնելով խեղճ սոլդատներին որոնք ուր գընում են և ինչ որ խնդրում են մերժում են նրանց խնդիրը, մանր փող չունենալու պատճառով։ Շատերը սոլդատներից ճանապարհից եկած, դաղրած, բեզարած թղթադրամը ձեռքերին մանեն գալիս խանութից խանութ, աղաչում են, խնդրում են մի բաժակ թէյ, կամ արաղ տալ, կամ մի բաժին կերակուր, իսկոյն հարցնում են նրանց «տենկի մելքի»։ եթէ խեղճը մանր փող չունէ, վայ նրա համբերութեանը, փողը ձեռին սաղ օրը ման է գալու։ շատերը մինչև անգամ 50 կոպէկ մսխելու կը յօժարեն, միայն թէ տային նրանց խնդրածը և մնացեալ 50 կոպէկը, բայց խուրդա չը գտնվելու պատճառով չեն կատարում նրանց խնդիրը։

Պոլիցիայի կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրում ենք Ղարս քաղաքի մէջ գտնված երկու մեծ ջրանցքների ամենավատ և ամենավնասակար դրութեան վրա, որոնց մէջ երկու արշին խորութեամբ կանգնած է ջուրը ճանապարհի խանգարման պատճառով և սկսել է նեխել և ապականվել, որի գարշահոտութիւնը ամբողջ քաղաքը բռնել է։ Բաւական չէ այն որ այդ ջրերը կանգնած մնալով հոտել են, դրա վրա աւելացնում են կրպակների տէրերը և պանդոկապետները իրանց ամենայն ապականված ջրերը և այլն, և, այդպէս ապականութեան անսպառելի այդ աղբիւրը գարնան սկզբից մինչև այսօր դեռ մնում է կանգնած և դեռևս չեն չտապում չուտով ճանապարհ բանալ կամ մաքրել, որի գարշահոտութիւնը օրից օր անտանելի է դառնում չոքերի պատճառով և օդը ապականվում է։

Բացի սրանից աղաչում ենք մեր կողմից մաքրութեան և առողջապահական հսկողութեան պաշտօնեաներին առաջը առնել բնակիչների այն վատ սովորութեան, որ անասունների աղբը և տան ամեն կեղտոտութիւնները լցնում են տան առջև կամ նրա շուրջը։ Ամեն տան պատի կամ դրան չէմքի արանքից կայ մի խողովակ որի միջից միշտ ներսից դէպի դուրը ուղիղ փողոցի մէջ են թափվում տան ամեն տեսակ ապականած ջրերը. եթէ անուշադրութեամբ անցնէք փողոցից յանկարծ տեսնում էք մի անակնկալ տեղից թափվում է մի աղբիւր ձեր վրա և կամ ձեր ոտքերը լինում են ջրի մէջ դռան առջևից անցկենալիս. դուք չէք կարող նկատել վասն զի դուռը առանց բաց անելու ներսից չը ջրում են, այդ պատճառով է որ Ղարսի նեղ փողոցները միշտ կեղտոտ են և հոտած ջրեր և ցեխերը անպակաս են և միշտ խոնաւ։

Ս. Պետերբուրգից անցեալ օրերը կոմսուհի Նինա Իվանովնա Լորիս-Մելիքով ուղարկել էր Ղարսի հայոց եկեղեցուն ընծայ մի ոսկեպատ թանկագին աւետարան, որը ամսի 11-ին նորին գերազանցութիւն Ղարսի օբլաստնի նաչալնիկ գեներալ-լեյտենանտ Պօպկո իր կառավարութեան բոլոր աստիճանաւորների հետ միասին բերեց եկեղեցի։ Այդ օրը պատարագը ճաշի էին թողած, եկեղեցին լցված էր բազմութեամբ, որտեղ կատարվեցաւ ի յիշատակ Լորիս-Մելիքեան և երկայնաբազուկ Արղութեանց ազգատոհմերի ննջեցեալների հոգեհանգիստ։ Գեներալ-լեյտենանտ Պօպկո և բոլոր աստիճանաւորները կանգնած էին մինչև եկեղեցու աւարտելը։ Պատարագից յետոյ Ղարսի անուանի քաղաքացիները Էչրամճեան Գէորգ աղա, Յովսէփ աղա, Ղուկաս աղա և հաճի Յարութիւն աղա և այլն, ի նշան շնորհակալութեան մի փառաւոր նախաճաշիկ տուեցին առաջնորդարանում, ուր, շամպանեայ գինիների շատ թասեր դատարկվեցան, Ն. Կ. Մ. քրիստոնէից ազատարար Ալէքսանդր Նիկոլայեվիչի կենաց, Մեծ Իշխան Միխայէլ Նիկոլայեվիչի, Լորիս-Մելիքեանցի, կոմսուհի Նինայի կենաց և այլ շատ կենացների հետ առաջաց քաջ զինուորների կենացը։

Ղարսի հոյակապ հին մայր եկեղեցին, որը հայոց Աբաս թագաւորի շինածն է, Յաճկաստանի կառավարութիւնը մինչև Ղարսի առնելը իբրև պահեստի տուն ծառայեցնում էր սուրբ եկեղեցին իր պիտոյքին, կառավարութիւնը խոստացել է վերադարձնել հայոց։

Ղարսի օբլաստնի նաչալնիկ գեներալ-լեյտենանտ Պօպկո, այց ելանելով Շիրակի և Շօրագեալի սահմանին և հայոց Անի քաղաքի աւերակներին մեծ սրտացաւութեամբ տեսնելով, Յաճկաստանի կառավարութեան հայոց այդ հնադարեան աւերակների և այլ վանքերի վրա ունեցած անասելի անհոգութիւնը և անգթաբար հիմնայատակ անելը, հրամայել է շրջանի կառավարիչներին անհատ անձինքների տիրապետութենից առնել ազգային սեփականութիւնները և վերահայել ու պաշտպանել հնութիւնները և Ղօշավանքի առաջնորդին յանձնեց Անիի նոր վանքերից մէկում նստել և հաստատել միաբանութիւն։

***

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

10 յունիսի

Այս անգամ ընթերցողիս ուշադրութիւնը դարձնում եմ մի կարիկատուրայի վրա, որ առատօրէն տարածված է այստեղ։ Ես գուցէ չը խօսէի այս նորութեան մասին, եթէ նա ուշադրութեան արժանի չը լինէր։ Եւ որովհետև թէ տեղական և թէ նոյն իսկ մի քանի օտար լրագիրների խմբագրութիւններին ուղարկված է ինչպէս լսում ենք, հետևաբար «Մշակի» ընթերցողներին ևս ծանօթութիւն ունենալու այդ կարիկատուրայի վրա, ես պարտականութիւն եմ զգում անուշադիր չը թողնել այդ նորութիւնը։ Ո՞վ կարող է հերքել թէ Կովկասն էլ չէ լուսաւորվել. ապա ինչ է, լուսաւորվել չէ՞ Կովկասեցին երբ նա արժանանում է նաև կարիկատուրաներին։

Ահա այդ կարիկատուրայի բոլոր բովանդակութիւնը.

Գործող անձինք են 3 սարդ (№ 1—ճանճերի դօկտոր. № 2—կօկարդ բէգ. № 3—ակնոց բէգ), 2 ճանճ, մինի քամակին գրված է «18,000 ր.» միւսի քամակին «400 ր.» մի ձուկ, որի քամակին գրված է «եղ»։ Սարդերի ոստայնը փռված է մի շինութեան ճակատին, որի վերևում գրված է «Ղարաբ—արան»։ Սարդերից ամեն մինը չռած է իր թաթերը. նրանցից մինը կամենում է կլանել 18,000 ր. ճանճը, միւսը 400 ր. ճանճը, իսկ երրորդը քաշում է դէպի ինքը եղակիր ձուկը. Շինութեան տակ նկարված է մի լինգ, որի հենման կէտը գրված է վեղարաւոր մի ծերունու վեղարի (բաշլիկ) ծայրին, իսկ լինգի բարձրացած ծայրում կամ կոթի վրա թառ է եղել այդպիսի մի այլ վեղարաւոր։ Սրա ոտից քաշ է ընկած, ինչպէս երևում է իր թրից, մի աստիճանաւոր, որ, վեղարաւորի ծանրութիւնը չատացնելով, կարծես կամենում է շինութիւնը շուռ տալ։ Մի այլ անձն, որի վրա գրված է «Գ և Պ» տառերը, ահագին փետուրեայ գրիչ, որի վրա գրված է «78 թ.» թաթախ է արել քամակի կողմում դրած մեծ թանաքամանի մէջ և երկու ձեռքով բարձրացրել դէպի երիտասարդ վեղարաւորը, որի թանաքից թափվում է նաև ծերունի վեղարաւորի վրա։ Նայողը այնպէս է ենթադրում թէ գրչակիր պարոնը ահ է տալիս իր գրչով երկու վեղարաւորներին ևս մրոտելու։ Շինութեան հանդէպ, որի քանդվող պատուհաններից երևում են աղաղակող և զարմացած մանուկներ, ուր փռվում է սարդերի ոստայնը, կանգնած է մինը ահագին վրձին ձեռքում, որի վրա գրված է «բեվիզիա» և որ կամենում է քանդել սարդերի բունը։ Երկայարկ, ճեղքճեղքվող շինութիւնը արդէն կարծէք շուռ է գալիս, ձախ կողմից երկու մարդ մինը ձեռքերն է դէմ տվել, միւսը մէջքը, որով կարծես պահպանում են շինութիւնը կործանվելուց։

Այս ամբողջ ծիծաղաշարժ տեսարանի վերևում, աջ կողմից լուսանակաձև երևում է արտասվող մի գլուխ։

Կարիկատուրան ընդհանրապէս հմուտ ձեռքի գործ է երևում։ Իսկ թէ ինչ բուն խորհուրդ ունի, այդ դժուար է իմանալ։

***

ՆԱՄԱԿ ՁԱՐԴԱԽԼՈՒԻՑ

—

29 յունիսի

Ամսիս 16-ին երեկոյեան մեր գիւղի Ս. քահանան առանց հոգևոր կառավարութեան հրամանի և առանց Մ. քահանայի գիտութեան, այս վերջինի եղբօր կինը ծածուկ պահել է մի այրի մարդու վրա։ Մ. քահանան, այս եղելութիւնը քիչ ժամանակից յետոյ իմանալով, չտապում է եկեղեցի։ Պահվողները, նրա գնալը իմանալով, թախ են կենում մօտիկ ձորերում, ուր և մնում են մինչև 11 ժամ գիշերվայ։ Մ. քահանան վրդովված վերադառնում է տուն, մտնելով իր սենեակը, գտնում է պահարանը բացած բաւականին փող և արծաթեղէն վերցրած։ Կարծիքները բաղվում են հարսի վրա. սկսում են որոնել, որ գտնէ տարած առարկաները յետ առնեն, բայց չեն գտնում, որովհետև մութ գիշերը պահվածներին օգնում էր։ Ամբողջ գիւղը շարժողութեան մէջ էր։ Մարդու և կնոջ բարեկամները, պատահելով միմեանց, յաճախ ծեծվում էին։ «Ծեծեցէք, խլեցէք, փախցրէք» գոռում էին ամենքը։ Հանդամանքին անծանօթը կը կարծէր, թէ Զալալէդդինի հրոսակը մտել է մեր գիւղը։ Վերջապէս, երբ պահվածները տուն եկան, հարսի բարեկամները սաստիկ վառված թափվեցին տան վրա և պատուհանները ու դռները փշրեցին։ Այդ միջոցին բարբոքված ամբոխը հայհոյում էր Ս. քահանային։

Այս բոլոր կռիւները պ. գանձապետի և Ս. քահանայի կարգադրութիւններն էին, որոնք մօտից նայում էին տեսնելու թէ ինչ ելք կունենան իրանց կարգադրութիւնները։

Մինչև քահանան և գանձապետը, գուցէ իրանց կարգադրութիւնների վրա զմայլելով, նայում էին, մեր տանուտէրը նոյնպէս պարապ չէր, նա ևս մասնակցում էր այդ կռիւին, պատպանելով հարսի բարեկամների — Մ. քահանայի որդոց կողմը։ Տանուտէրն էր, որ հրամայում էր փշրել խեղճ մարդու դռները և պատուհանները և ջարդել այն բոլոր մարդկերանց, որոնք կը հակառակէին իր կարգադրութիւններին։ Վերջապէս կռիւը հազիւ հազ վերջացաւ մօտ 1 ժամին առաւօտեան։ Տանուտէրը յետ դարձաւ ջարդած բազկով։ Միւս օրը տանուտէրը սկսեց գործը քննել, պահված մարդուն պատժելու նպատակով, բայց իր նպատակին չը հասաւ, որովհետև բոլոր գիւղացիք երկու կուսակցութիւն էին կազմում—պահող քահանան մարդու բարեկամներով, տանուտէրը կնոջ բարեկամներով։ Չը հասնելով իր նպատակին, տանուտէրը, չը նայելով այդ երկու կուսակցութիւններին հաշտեցնել ջանացող մի քանի պարոնների միջնորդութեանը, գնաց գաւառապետի օգնականին բաղուկը ջարդելու մասին գանգատելու։

Պահող քահանան, հետևելով տանուտէրի օրինակին, նոյնպէս գնաց գաւառական պրիստաւին գանգատելու, որ մօրուքը հայհոյելու մասին «ակտ» կազմէ հաշտարար դատարանը տալու համար։ Երկու կողմից էլ հրաման եկաւ, որ նշանակած մարդիկը ներկայանան։ Այն մարդիկը որոնք պէտք է ներկայանային գաւառապետի օգնականին, մի և նոյն ժամանակ պէտք է ներկայանային և պրիստաւին։ Մի թուրք աստիճանաւոր եկաւ, եղելութիւնը իմանալուց յետոյ, տանուտէրի գրպանը մի քանի բուբլ դնելով, հակառակորդներին հաշտեցրեց։

Հ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 3 յուլիսի

Հայ գաղթականներին օգնութիւն հասցնող Թիֆլիսի մասնաժողովը ինձ մի թերթ ուղարկեց խարկով քաղաքը նուիրատուութիւններ հաւաքելու համար։ Հասցնելով ձեզ, պ. խմբագիր, հաւաքած 65 ր., խնդրեմ տպագրէք ձեր լրագրի մէջ նուիրատուների հետևեալ ազգանունները։

Казаръ Григоричъ Мирзоевъ 1 рубль, Е. О. Степановъ 1 р., Х. 1 р., Степанъ Санамянцъ 5 р., *) Նիկոլայ Իսաւերդանց 1 ր., Василій Бирюковъ 3 р., Մարտիրոս Խութլուպէկեան 1 ր., Ստեփան Ղալաթարով 3 ր., Отъ жителя Г. Харькова 1 р., N. 1 р., N. 1 р., Արտէմ Օքօյեանց 13 ր., Սարգիս Եղիազարեանց 3 ր., Յակոբ Օրբէլեանց 3 ր., Օհանէս Թէմուրեանց 3 ր., Մարտիրոս Յարութիւնեան Վասիլեանց 3 ր., Սողոմոն Պավլովիչ Մնացականեանց 3 ր., Գէորգ Հէջուբեանց 6 ր., Մի Թիֆլիսեցի հայասէր հայ 15 ր., Յովհաննէս Ասրիբէկեանց 2 ր.—Ընդամենն է 65 բուբլ։

Դաւիթ Օրբելի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ռուս «Новое Время» լրագիրը հաղորդում է որ ներքին գործերի մինիստրութիւնը կազմեց մի պրօէկտ, որի զօրութեամբ պէտք է մացնվի ռուսաց ամբողջ կայսրութեան մէջ երեխաներին ծաղիկ կտրելու պարտադիր օրէնքը։ Պրօէկտը ներկայացրած է պետական խորհրդին։

—

«С. Петерб. Вѣд.» լրագիրը լսել է որ Բարձրագոյն հաստատված յանձնաժողովը, ստատսեկրետար Գրօթի նախագահութեամբ, Ռուսաստանի բանտերի դրութիւնը վերանորոգելու նպատակով, դրեթէ աւարտեց աշխատութիւնները։

—

ԺԵԼԷԶՆՕՎՕԴՍԿ միներալական ջրերից մեզ գրում են. «Այս տարի Ժելէզնօվոդսկի ջրերը վայելելու համար մեծ բազմութիւն է հաւաքվել այստեղ։ Եղանակը շատ լաւ է և այս տարի այստեղ բոլորովին շոք չէ անում։ Պ. Պաշկովսկի, որ նորերումս Թիֆլիսում կոնցերտներ էր տալիս, այժմ այստեղ տալիս է իր կոնցերտները և շարունակում է մի և նոյն պիէսաները ածել պիանոի վրա, ինչ որ ածում էր Թիֆլիսում։»

—

«Тифл. Вѣстн.» լրագիրը հաղորդում է որ այս տարի աշնանը պէտք է հաւաքվեն ԹԻՖԼԻՍՈՒՄ Թիֆլիսեան նահանգի ժողովրդական ուսումնարանների վարժապետները։ Ուսուցչական այդ ժողովում պէտք է կարդան օրինակելի դասեր։

—

Պ. Ղազեանց, որի մասին մենք մի քանի անգամ յիշեցինք և որ ալէքսանդրից փոքրիկ արձաններ է շինում, խնդրում է մեզ յայտնել որ իր շինած արձանները նա ծախում է իր խանութում, ԹԻՖԼԻՍԻ Կուկիա անուանված թաղում գտնված Զարափովի տան մէջ։

—

ՂԱԶԱԽԻ գաւառից մեզ գրում են. «Այս տարի ամեն տեսակ բերքերը շատ առատ էին, բայց յունիսի 12-ին եկած կարկուտը 5 բօպէի մէջ բնակիչներին զրկեց բոլորից։ Այգիները, արտերը բոլոր այնպէս են վնասված, որ գուցէ եկող տարի էլ վատ բերքեր տան. վնասը հասնում է 15,000 ր.։ Անասունների հիւանդութիւնը շարունակվում է, շրջականների գիւղացիների դրանից մօտ 10,000 ր. վնաս են կրել, ուրեմն այս տարի մեր գաւառը 25,000 բուբլ վնաս է ստացել։»

—

ՂԱԶԱԽԻ գաւառից մեզ հաղորդում են, որ յունիսի 12-ին գիշերը շրջակայ սարերից մէկի վրա կայծակ է ընկել և մի քանի անասուններ է սպանել։ Երկու երիտասարդ հովիւներ և մի կին, որոնք մօտ են եղել ուշաթափվել են, բայց չեն մեռաւել։

—

ՁԱՐՏԱԽԼՈՒ գիւղից մեզ գրում են. «այս տարի Շամքոռ գետը անձրևներից վարարվելով բաւական վնասներ տուեց։ Յունիսի 21-ին այդ գետի մէջ երկու մարդիկ խեղդվեցան։»

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ հոգևոր դպրոցի հոգաբարձուները ուսուցիչների հետ շատ անքաղաքավարի են վարվում։ Հարցաքննութեան ժամանակ նոքա անդադար ընդհատում են ուսուցչի առաջարկած հարցերը։ Վերակացուհու հետ վարվում են ինչպէս աղախնի հետ։ Այս երևոյթը պատահում է շատ գաւառական քաղաքներում և հայերին պատիւ չէ բերում։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ հաղորդում են, որ հոգևոր իշխանութիւնը դիտաւորութիւն ունէ հեռացնել Արիստակէս վարդապետ Սեդրակեանին և նրա տեղ նշանակել Թավրիզի նախկին առաջնորդ Անդրէաս եպիսկոպոսին։ Մենք վաղուց խորհուրդ ենք տուել բացի պ. Բաբաջանեանից և ուսուցիչներից հեռացնել նոյնպէս և Արիստակէս վարդապետին։ Եթէ մեզ հասած լուրը ճիշդ է, հոգևոր կառավարութեան կարգադրութիւնը շատ գովելի կը լինէր։ Միւս կողմից մեզ լուր է հասել, որ պ. Աղայեանց Արիստակէս վարդապետի առաջարկութեամբ ընդունել է Շուշու դպրոցի ուսուցչի պաշտօնը և ուսուցչական խումբ է կազմում Թիֆլիսում։ Խորհուրդ կը տայինք այդ պաշտօնները ընդունել ցանկացող պարոններին սպասել մինչև գործը պարզվի։

—

Երէկվայ համարում ներքին փոխառութեան տիրածի թուանշանների հեռագրի մէջ երկու սխալ մտաւ՝ փոխանակ 1000 և 5000 ր. տպված էր տարած գումարի բաժնում 100 և 500 բուբլ։

—

«Մշակի» հետևեալ համարում կը տպենք պ. Անդրէաս Արծրունու Բերլինի նամակը կոնգրէսի և հայոց խնդրի վերաբերութեամբ։

---

*) Ստեփան Սանամեանց հրաժարվեցաւ տալ իր ստորագրված հինգ բուբլը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԿՈՆԳՐԷՍԻՑ

—

Ֆրանսիական «Temps» լրագրի թղթակիցը Բերլինից, յուլիսի 2-ից հաղորդում է որ բացի այն յայտնի յիշատակագրից, որ հայ դելէգատները ներկայացրին կոնգրէսին, լեզուները ստացան նոյնպէս հայոց խնդրի մասին և մի այլ յիշատակագիր, որ խմբագրել է Եգիպտոսի խեդիվի յայտնի մինիստր Նուբար-փաշան։ «Այդ գօկումենտը, ասում է Ֆրանսիական լրագրի թղթակիցը, պարունակում է իր մէջ Թիւրքիայի Հայաստանի վերակազմութեան ամբողջ պլանը, ներկայացնելով նեղ, բայց պարզ էջերի մէջ Հայաստանի գրութեան նկարագիրը և մի քանի նշանաւոր ապացոյցներ բերելով Հայաստանի մէջ առնելու վերանորոգութիւնների անհրաժեշտութեան մասին։ Հայոց դելէգատներին յայտնի է Նուբար-փաշայի յիշատակագիրը և նրանք յոյս ունեն որ այդ գրութիւնը մեծ ազդեցութիւն կը գործէ լեզուների վրա, իր պարզ և ճարտար ոճի շնորհով։ Ինձ ասում էին դելէգատներից ոմանք որ Նուբար-փաշան մոցրեց այդ իր գրութեան մէջ արևելքի հետ իր ամբողջ ծանօթութիւնը և ցոյց տուեց իր հմտութիւնները և ստացած բազմաեայ փորձը։ Որովհետև Նուբար-փաշան ինքն հայ է, պարզ է որ նրա դաւանակիցները խնդրեցին նրան տալ իր ձայնը կոնգրէսին նրանց իրաւունքները պաշտպանելու համար։ Նա շտապեց բաւականութիւն տալ նրանց պահանջներին և ներկայացրեց Բերլին իր գրութիւնը հայերի գործին աջակից լինելու համար։ Ես կարդացի այդ հետաքրքիր գօկումենտը և թոյլատրութիւն ունեմ ապագրել նրան, բայց ինձ թվում է որ հեղինակը կամենալով պաշտպանել հայոց գործը ինքն չէ կամենում անձամբ ապարէզ դուրս գալ։ Ձշմարիտն ասած, ինձ յայտնի չէ աջողութեան ոլքան մեծ հաւանականութիւն ունի հայոց խնդիրը, բայց նրանց պատգամաւորները մեծ յոյսեր ունեն, որ ստանալու են իրանց պահանջած իրաւունքների մի մասը գոնէ։»

ԱՄԵՐԻԿԱ

—

Նիկագոյից հաղորդում են որ սոցիալականները գրգռում են մշակներին ընդհանուր գործադուլ անելու որին կը մասնակցեն նաև երկաթուղու բոլոր գլխաւոր գծերի մէջ աշխատող մեքենագործները։ Գործադուլը կը սկսվի միանգամից քսան զանազան տեղերում։ Յայտնապէս երևում է այժմ որ մշակները յուզված, գրգռված են և կարելի է որ մի ոչինչ պատճառով աւելի մեծ խռովութիւն ծագի, քան թէ անցեալ ամառվայ խռովութիւնը։

Կվէբէկում որ Կանադայի մայրաքաղաքն է, գործադուլ անող մշակները մեծ անկարգութիւններ են գործել յունիսի 12-ին և զօրքերը ստիպվել են միջամտել։ Երկու երեք հազարի չափ մշակներ յարձակվել են պ. Պեռէրսի գործարանի վրա որ մեքենաները խորտակեն և աշխատութիւնը դադարեցնեն։ Պոլիցիականներ և հեռաւոր զօրքեր եկել են որ բազմութիւնը ցրվեն. բայց նրանք դեռ չը հասած, ամբոխը արդէն խորտակել է պ. Պեռէրսի գործարանի դուռը և ներս մտնելով, նրանից բռնի ստորագրութիւն է առել որ մշակներին օրական գոնէ մէկ դոլլար վճարէ աշխատութեան վարձ։ Այդ ժամանակ հեծելազօրքեր էլ եկել են որ ամբոխը ցրվեն, բայց բազմութիւնը կարկուտի նման քարեր է տեղացել նրանց վրա և հարիւրապետի օգնականին մահամերձ վիրաւորել է։ Զօրքերից շատերն էլ վիրաւորվել են։ Ամբոխը դիմել է դէպի պարլամենտի պալատը ուր պ. Ժոլլը նրանց դիմաւորել է և երկար հրապարակախօսութեամբ աշխատել է համոզել որ կարգը պահպանեն և օրէնքը յարգեն։ Ցեռոյ դիմել են պ. Ընոյի վաճառատունը։ Պ. Ընօ ներկայացել է ամբոխին և փորձել է հրապարակախօսել բայց չեն կամեցել իրան լսել և վաճառականների դռները խորտակելով, 400 տակառ ալիւր բաշխել են այնտեղից անցկացող այլերի վրա։ Երբ զօրքերը հասել են որ կողոպուտը արգելեն, ամբոխը քարերով յարձակվել է նրանց վրա։ Այդ ժամանակ զօրքերը, գնդապետի հրամանի համեմատ, կրակ են արել ամբոխի վրա որ սաստիկ անկարգութեամբ ցիր ու ցան եղած սկսել է փախչել։ Մի գնդապետ, երկու հարիւրապետ և բազմաթիւ զօրքեր և մշակներ վիրաւորվել են։ Կվէբէկի խռովութիւնը ցոյց է տալիս թէ ինչպիսի զգացումներով ոգևորված են անգործ մնացած մշակները որոնք դժբաղդաբար շատ բազմաթիւ են այժմ բոլոր հիւսիսային Ամերիկայում։

Ֆրանսիան և Իտալիան հաւանել են մասնակցել միջազգային կոնֆերէնցիային որ Ամերիկայի Միացեալ-Նահանգների կառավարութիւնը առաջարկել է, որպէս զի ամեն տէրութիւնների մէջ փողերի արժէքների հաւասարութիւն լինի։ Ռուսաստան, Հոլանդիա, Բելգիա, Շվէյցարիա, Յունաստան, Ունգարիա արդէն ընդունած են մասնակցել այդ կոնֆէրէնցիային, որ հաւանական է թէ կը հաւաքվի Փարիզում։

Ամերիկայի երևելի բանաստեղծ պ. Վիլլիամ Բրիանդ մեռել է մայիսի 29-ին, Մաձինիի կիսարձանը կանգնելու հանդիսի օրը։ Պ. Բրիանդ այդ հանդիսի մէջ երկար մի ճառ է խօսել, գլխաբաց կանգնած սաստիկ արևի տակ։ Հանդիսի վերջանալուց մի քանի բոպէ յետոյ, արևից վնասված, ուշքից ընկել, մեռել է 83 տարեկան հասակում։ Նիւ-Յորկի իտալացիները բազմաթիւ պատգամաւորներ են ուղարկել նրա թաղման հանդիսին որին անթիւ բազմութիւն ներկայ է գտնվել։

ՖՐԱՆՍԻԱ

—

Յունիսի 30-ին, հանրապետութեան արձանը կանգնել են Փարիզում, Շան-դը-Մարսի հրապարակում։ Հանդէսը շատ շքեղ է կատարվել. մինիստրները, դէպուտատները, սենատորները և շատ ժողովուրդ ներկայ գտնվել են։ Պ. Տէսսէրան-դը Բօր, հողագործական և առևտրական մինիստրը, խօսել է հետեւեալ խօսքերը։ «Մենք ձեզ հրաւիրել ենք այսօր, հանրապետութեան արձան կանգնելու համար։ Մտադիր էինք որ մեր նշանաւոր արհեստագէտներից մէկի շինած այս գործը իր պատուաւոր տեղն ունենար արուեստահանդիսի բացված օրը։ Այս պալատի դրան վրա փառաւորապէս նստած, նա պէտք է խորհրդաւոր կերպով ներկայացներ հայրենիքը և իր վեհ կերպարանքով քաջալերէր և պաշտպանէր ազատութեան գաղափարները համաձայնութեան և խաղաղութեան մէջ, ժողովրդների միութիւնը աշխատութեան, առաջադիմութեան և մարդասիրութեան մէջ։ (Ծափահարութիւններ։) Նրա ոտքի ներքև հերթով անցկացած ժամանակ, մեր կեցցէներով պէտք է հաստատէինք թէ մենք հաւատում ենք որ նրա ոգին կը ստեղծագործէ և մեր բոլոր շահերը կը պաշտպանէ։ Մենք նրան պիտի յանձնէինք մեր յոյսերը արուեստահանդիսի աջողութեան համար որ ունեցանք այժմ։ Նա էր ներշնչել արուեստահանդիսի բացումը. հանրապետութեան գործն էր այդ որ միշտ նրա փառքերից մէկը կը լինի ապագայում։ Զանազան նիւթական դժուարութիւններ մինչև այժմ ուշացրին այս արձանի կանգնեցնելը։ Շատ ցաւում էինք դրա համար։ Այլ ևս չենք ցաւում այսօր, որովհետև կարող ենք այս հանդէսը միացնել ազգային մեծ հանդիսի հետ որ յատկացած է արուեստահանդիսի աջողութիւնը տօնելու և նրա յիշատակը մշանջենաւորելու։»

Այս խօսքերը ծափահարութիւններով ընդունվելուց յետոյ, ներքին գործերի մինիստր պ. դը Մարսէր հանդէսը բացել է մի գեղեցիկ ճառ խօսելով որի մէջ ցոյց է տվել հանրապետութեան բերած օգուտները Ֆրանսիային։ Այս ճառից յետոյ նուագածուների խումբը նուագել է Մարսէլիէզի երգը որ սաստիկ ծափահարութիւններով ընդունվել է ներկայ եղողներից։

Վիկտոր Հիւգոյի այն գեղեցիկ խօսքի համեմատ թէ յունիսի 30 թուականը պէտք է ոչ միայն ուրախութեան, այլ և ներողութեան թուական լինի, այդ օր Ֆրանսիայի հանրապետութիւնը ցոյց է տվել ոչ միայն իր շքեղութիւնը, այլ և իր գթութիւնը որ աւելի մեծ փառք է։ Բազմաթիւ դատապարտվածներ որոնց մէջ կան նաև 1871-ի ապստամբութեան մասնակիցներ, արձակվել են նոյն օր և մի քանիներին էլ պատիժները թեթեւացրել են։

Գրականական կոնգրէսում առաջարկվել է հաստատել միջազգային գրականական մի ընկերութիւն, որի պատուաւոր նախագահութիւնը կը տրվի Վիկտոր Հիւգոյին։

Մի մասնաժողով է կազմվել Սէն-Ժերմէն արուարձանում ուր մեռած է պ. Թիէր, հանրապետութեան այդ առաջին նախագահի արձանը կանգնելու համար։

ՍՊԱՆԻԱ

—

Մէրսէդէս թագուհու մահը մեծ ցաւ պատճառած է ամեն դասակարգի մարդկանց։ Դոնա Մարիա-դէլաս-Մէրսէդէս դեռ այս տարի յունվարի 23-ին եկել էր Մադրիդ իր գեղեցկութեան և իր ծաղիկ հասակի փայլունութեամբ։ Նրա ազգականների վիշտը աննկարագրելի է։ Հօրը, Մոնպանսիէ դուքսին, հազիւ կարողացել են բաժանել Մերսէդէսի մահվան անկողնից։ Պալատը, դիպլոմատիան և զօրաբանակը վեց ամիս սուգ կը պահեն։ Թագուհու մեռնելուց յետոյ Ալֆոնս XII մնում է առանձին, չէ ուզում ոչ ոքի հետ տեսակցել։ Մի կարճ տեսակցութիւն է ունեցել միայն պ. Կանովա-դել Կաստիլլոյի հետ, սովորական արարողութիւնները (ցերեմոնիա) որոշելու համար։ Նրանից յետոյ չէ կամեցել տեսնել ոչ ոքի երես, մինչև անգամ իր ընտանիքից եղողներին։ Ալֆոնս XII իրան քաջ էր ցոյց տվել Թագուհու հիւանդութեան ժամանակ, բայց ճգնաժամի բոպէին տկարացել էր բոլորովին։ Թագուհին մի քանի ժամ առաջ քան թէ մեռնելը, արթնացել է իր թմրութենից և ուշքի է եկել և երբ նշմարել է որ թագաւորը իր անկողնի գլխին նստած թեքած է, վերջին և տենդային ուժով քաշել է նրան դէպի ինքը և սեղմել է։ Այդ սրտակսկիծ տեսարանը լացացրել է բոլոր ներկայ գտնվողներին։ Հէնց որ թագուհին մեռել է, թագաւորը հանել է նրա մատից մատանին որ շատ քիչ ժամանակ է որ տուել էր նրան։ Այդ պայմանով միայն կարողացել են համոզել թագաւորին որ հեռանայ մեռելի սենեակից և առանձնացել է մի սենեակում։ Թագուհին մեռել է այն սենեակում ուր ծնած է Ալֆոնս XII։ Պապը և բոլոր եւրոպական տէրութիւնները ցաւակցութեան հեռագիրներ են ուղարկել թագաւորին։ Ամբողջ քաղաքը սուգի մէջ է մտել։ Երբէք այս աստիճան ցաւակցութեան ցոյցեր չեն եղել Մադրիդում։ Նոյն յուզումը կայ և Նահանգներում։ Հեռագրական թելերը չեն բաւականանում փոխադրելու համար ցաւակցութեան հեռագիրները։ Շատ մայրաքաղաքներից, ամեն քաղաքական կուսակցութիւնների մասնաժողովները, դեմոկրատական կուսակցութիւնը անգամ, հեռագրով յայտնում են իրանց ցաւակցութիւնը։ Դոնա Մէրսէդէս բարձրացել էր Սպանիայի գահի վրա, չը նայած մայր-թագուհու դիմադրութիւններին և արիստոկրատիայի ու հին կուսակցութիւնների թշնամական անտարբերութեան։ Իր հայրն էլ Մոնպանսիէ դուքսը, ժողովրդական մարդ չէ։ Մադրիդի ամբողջ ժողովուրդը ներկայ է գտնվել թաղման հանդիսին։ Նրան թաղել են առանձին գերեզմանատան մէջ, որովհետև Ֆիլիպ II-ի ժամանակից սկսված սովորութեան համեմատ, անզաւակ մեռած թագուհիներին չեն թաղում թագաւորների գերեզմանատան մէջ։

ԱՒՍՏՐԻԱ

—

Վիէննայից գրում են «National Zeitung» լրագրին հետևեալը։ Հաստատ աղբիւրից տեղեկանում ենք որ Բոսնիան գրաւելու յատկացած զօրաբանակը կը մտնի Բոսնիա յուլիսի առաջին շաբաթներում։ Բոսնիական բանակի հրամանատար կը լինի Ֆելդցէոգմէստր Ֆիլիպովիչ և Հերցէգովինական բանակի՝ գենէրալ Իվանովիչ։ Զօրքերի թիւը կը հասնի 80,000-ի, որոնց մէջ գտնվում են նաև դալմատիացի որսորդ հեծելազօրքեր որոնք շատ ծանօթ են այդ երկրի հետ։ Զօրաբանակի հետ կընկերանայ մի քաղաքային կոմիսէր որի պաշտօնը կը լինի կազմակերպել երկրի կառավարութիւնը։ Բաւականի թւով կառավարական պաշտօնեաներ կը գտնվեն իր հետ։ Մեծ դժուարութիւնը այնտեղ կը լինի երբ աւստրիական զօրքերը Սավից անցնելուց յետոյ, սաիպեն յետ քաշվել 40 հազար թիւրքաց նիզամներին որոնք ցրված են այն կողմերը գրեթէ ամեն տեղ և կամ կամենան զինաթափ անել նիզամներին երբ դիմադրեն։ Նոյնպէս բաւականի դժուար կը լինի ցրվել աւազակների խումբերը, որոնք աւերում են այդ լեռնային երկիրները։ Աւստրօ-Ունգարական զօրաբանակը ամեն տեսակ պատրաստութիւններ տեսած է որ եթէ կռիւներ պատահեն, կարողանայ զսպել։ Այժմից չէ կարելի գուշակել թէ աւստրօ-ունգարական զօրաբանակը մինչև որտեղ կը գրաւի. բայց հաւանական է թէ նրա դրօշակը կը ծածանի մինչև Նովի-Բազարի պասնէչների վրա։ Զօրաբանակի շարժումը այնպիսի լռութեամբ և ճշգութեամբ կատարված է որ ցոյց է տալիս թէ բանակը շատ լաւ պատրաստված և կազմակերպված է։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԲԵՐԼԻՆ, 2/14 յուլիսի։ Խաղաղական դաշնագիրը ստորագրելուց յետոյ իշխան Բիսմարկը փակեց կոնգրէսը հետևեալ խօսքերով։ «Կոնգրէսի աշխատանքները վերջացրած յայտնելով, նախագահի վերջին պարտականութիւն եմ համարում շնորհակալութիւն տալ այն լեզուներին, որոնք մասնակցում էին մասնաժողովներին, այսինքն Դիպլէին և Հօհենլօէին։ Բարձր ժողովի կողմից յայտնում եմ շնորհակալութիւն նոյնպէս Քարտուղարութեանը կոնգրէսի աշխատանքները ապահովելու դիտաւորութեամբ ունեցած ջանքերի համար։ Շնորհակալ եմ այն պաշտօնեաներից և ծառայողներից, որոնք մասնակցում էին յիշեալ աշխատանքներին Բարձր ժողովի համար։ Մեր բաժանվելու րոպէին ես չեմ դժուարանում հաստատել, որ կոնգրէսը Եւրոպայի շնորհակալութեան արժանի հանդիսացաւ։ Եթէ անկարելի էր իրագործել հասարակական կարծիքի բոլոր ցանկութիւնները, այնու ամենայնիւ պատմութիւնը արժանի կերպով կը գնահատի մեր ձգտումները և աշխատանքները։ Պարոններ լեզուներ հաստատված են, որ նոքա տուին Եւրոպային խաղաղութեան մեծ բարիքը, որին մեծ վտանգ էր սպառնում։ Այս հետևանքը չէ կարող փոքրացնել ոչ մի պարտաւանք, որ կուսակցական ոգին կը ներշնչէ հասարակութեանը։ Ես հաստատ համոզված եմ, որ Եւրոպայի համաձայնութիւնը Աստուծու օգնութեամբ ամուր կը լինի։ Մեր աշխատանքների ժամանակ մեր մէջ ծագած անձնական բարեկամութիւնը կը հաստատէ, կամրացնէ մեր կառավարութիւնների բարի յարաբերութիւնները։ Ես դարձեալ շնորհակալութիւն եմ յայտնում իմ ընկերներին ինձ ցոյց տուած բարի հաճութեան համար և պահպանելով խորին երախտագիտութեան զգացմունքը, փակում եմ վերջին նիստը։»

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 յուլիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 97 ր. 26 կ., երկրորդ 96³/₈ ր., երրորդ 96¹/₈ ր., չորրորդ 96½ ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 243 ր., արևելեան 95 ր. 50 կ., ոսկին 7 ր. 90 կ., Տրամադրութիւնք հանգիստ է։ Դիսկոնտ 4%։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են ՍՊԻՏԱԿ ԲՈՒՄԱԶԵՑԱ չինուորականների շորերի համար արշինը 1 ր. և բարձր, ՈՒԻՆՍԻ շորերի համար և ՊԱՐՈՒՍԻՆ արշինը 50 կ., ՓՕՇԻՆԵՐ տարափոխիկ հիւանդութիւնների դէմ և ԽԻՆԱՑԻ ԲԱԼԶԱՄԵՆ (իւղ) $1^1/_4$ ր., ՍԱՊՕՆ 10 կ. և բարձր, ՅԻՏՐԱԴ մագնեցի $1^1/_2$ ր., ԲԻՍԿՎԻՏՆԵՐ 1 ր., և բարձր, ՖԻԼՏՐՆԵՐ 4-40 ր., երկաթեայ մանճակալներ 5 ր. և բարձր, ադոցներ 50 կ. և բարձր, ճանապարհի ԱՄԱՆՆԵՐ դիւժինը 3 ր., ԳՐԻՉՆԵՐ արզը 15 կ. և բարձր, ԲԷՎՕԼՎԵՐՆԵՐ 6 ր. և բարձր 1000 ասեղ 80 կոպէկ, արական ԹԱՄԲԵՐ 40 ր. և բարձր. ԻՒԱԿԱՆՆԵՐ 70 ր. և բարձր, ծաձկոցներ, մակենաօչներ, երեխաների շորեր 4 ր. և բարձր, հիանալի վերարկուներ 12 ր. և աւելի, վերականգնող ՇՄԱԿՄԱՍՏԵՐ 2 ր., կողպէքներ և պոդնոսներ 10 կ. և բարձր, ըօմ, կոնեակ, պօրտ-վէյն, խերես և անգլիական օղի $1^1/_2$ ր., ՊԱՆԻՐ չեսաեր 60 կ. և բարձր. Շուտով կը լինի լաւ լիէյ 1 ր. ֆունտը։

10—20

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԷՐԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են՝ ԿԱՐԲՈԼԵԱՆ հեղուկ և փոշի տարափոխիկ հիւանդութիւնների դէմ $1^1/_2$ ր., ԽԻՆԱՑԻ ԻՒԼ $1^1/_4$ ր., ցեստրատ մագնեզիայի 2 ր., ԲՕՄ, ԿՕՆԻԱԿ, ՊՕՐՏՎԷՅՆ, ԽԷՐԵՍ և անգլիական օղի $1^1/_2$ ր., ճանապարհի ամաններ դիւժինը 3 ր., թէյի գդալներ (չեն սեանում) $1^1/_2$ ռուբլ և բարձր, ճանապարհի դանակներ 80 կ., ճանապարհի ֆիլտրներ 4 կ., մատիտներ հատը 1 կոպ., երկաթի գրիչներ 18 հատը 5 կ., ասեղներ 1000 հատը 80 կ., ծաձկոցներ, մանկական շորեր և չը թրջվող վերարկուներ 4 ռուբլ և բարձր, գլխարկներ և ժիլետներ 75 կ. և բարձր, կաուչ 10 ր. և բարձր, տրիկո 1 ր. և բարձր, ՊԱՐՈՒՍԻՆ 60 կ. և բարձր, բամազէի 1 ր. արշինը, շղթաներ (Աբխազիայի ոսկուց) 50 կ. մինչև 3 ր.։ Մի և նոյն խանութում շուտով կը ստացվեն ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր. և բարձր, բիսկվիտներ, մեծ ֆիլտրներ և ՎԵՐԱԿԱՆԳՆԵՑՈՂ անուանված մի դեղ և այլն։

18—20

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է քաղաքի բնակիչներին, որ գնահատական հարկի 1875 թ. երկրորդ կէսի պակասորդների հաւաքելը Դումայի վճռի համեմատ յանձնած է նահանգական քարտուղար Ալէքսանդր Միխայլովիչ Զաբարովին։ Քաղաքային վարչութիւնը հրաւիրում է կալուածատէրերին, որոնք պէտք է վճարեն պակասորդներ, յանձնեն փողը Զաբարովին և նրանից տպած ապահովագիրներ ստանան։ Հակառակ դէպքում պ. Զաբարովին իրաւունք է տուած անկանոն հարկատուների հետ վարվել քաղաքային կանոնադրի 131 յօդ. համեմատ։ Թիֆլիսի գլխաւոր պ. Պոլիցմէյստերին յայտնած է, որ նա գործակցի պ. Զաբարովին հարկաւոր դէպքում։ Այն կալուածների ցուցակը, որոնք պէտք է պակասորդը վճարեն, պակասորդների քանակութիւնը իւրաքանչիւր կալուածից և տուգանքները վարչութեան անդամի ստորագրութեամբ յանձնված են պ. Զաբարովին։ Պ. Զաբարով փողերը կընդունի իր գրասենեակում, որ գտնվում է քաղաքային վարչութեան տան մէջ, առաւօտեան 9—12 ժամը։ Պ. Զաբարովի բացակայութեան ժամանակ փողը կարելի է մացնել վարչութեան գանձարանը։

3—3

Ալէքսանդրապոլու հայոց վիճակային հոգևոր և Արղութեան օրիորդայ ուսումնարաններում հարկաւոր են ուսուցիչներ յետագայ առարկաների համար. 1, ռուսաց լեզուի (երկու ուսուցիչ) 2, հայոց լեզուի (երկու ուսուցիչ) 3, Պատմութեան և Աշխարհագրութեան. 4, բնական գիտութեանց (սկզբունք) 5, Մաթեմատիկայի (թուաբանութիւն, երկրաչափութիւն և սկզբունք ալգեբրայի) և 6, Արղութեան ուսումնարանի համար մի վարժուհի ձեռագործութեան նոյն և վերակացուհի։ Իւրաքանչիւր ուսուցիչ կունենայ շաբաթական մինչև 24 դաս։

Գրեթէ բոլոր առարկաների դասաւանութիւնը պէտք է լինի երկոքին ուսումնարանների բարձր դասատներում։ (Տղայոց ուսումնարանը բացի պատրաստականներից՝ ունի չորս դասատուն, իսկ օրիորդայը—երկու. մատղութիւն կայ բանալ և երրորդը)։ Դասաւանութիւնները պէտք է սկսվեն անշուշտ օգոստոսի 15-ին։

Ցանկացող ուսուցիչներից կը խնդրվի առանց ուշացնելու յայտնել իրանց պայմանները հետևեալ հասցէով.—Александрополь. Попечительству Армянскаго Духовнаго (или Аргутинскаго Дѣвичьяго) Училища.

5—6

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ

ՀԱՏ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ, ՎԱՐՁՈՎ, ԵՎ ՏՐՎՈՒՄ ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ)

ստացվել են մեծ քանակութեամբ աշխարհագրական պիտոյքներ՝

ա. Հասարակ երկրագունտներ զանազան մեծութեան	50 կ.	մինչև	3 ր. 50 կ.
բ. Երկրագունտներ պղնձեայ կիսամիջօրէականով. .	1 ր. 20 կ.	—	5 ր. 50 կ.
գ. Երկրագ. պղնձեայ ամբողջ միջօրէականով, հասարակածով և կոշմնացոյցով	9 ր.	—	20 ր. և աւելի
դ. Տէլուրի (երկիր և նորա շրջ. արեգակի շուրջ).	18 ր. և աւելի		
ե. Աշխարհագրաց. ատլասներ	55 կ.	—	5 ր.

զ. Մայր ցամաքների և Կովկասի քարտէզներ քարթանի վրա կպցրած և առանց դրան, պատմական, նրկարչական, կենդանաբանական և բուսաբանական ատլասներ, ձեռնարկներ, դասագրքեր և այլն։ Պատուէրները կատարվում են ճիշդ և արագ։

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵԱՅԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ԲԱՑ Ի ԵՄԵՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9 *ժամից մինչև* 2 *ժամ*

կէսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ *օրերից։*

ՑՈՒԼԻՍԻ 5. ՏԵՂԵԿԱՑՈՒՑ ԹԻՖԼԻՍ. 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Ցուլիսի 4-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պոլումպերիալը)	8	10
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1550	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1310	—
Վիգրէյնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրէյնի »	235	—
Մարսելի կուրսը 237—	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	10	67
Վենայի կուրսը ածէ 112 գլ.	121	—
Դաւրեժի բարաթը. . .	5	90
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	300	
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	7	90
» միւս տեսակը.	7	80
» չաքարաւաղը.	6	20
» տրանզիտը. .	6	50
» մաքսը վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	50
Միւս տեսակը հին սերմից.	7	50
Բուրդը թուչի . . .	8	—
» թարաքամի .	4	20
Ալիւր Շորագալու . .	1	40
» Երևանի. . . .	—	—
Գարին.	1	20
Մոմը բնաճարպի (стеар.)	13	20
Մետաքս Նուխվայ. .	180	—
Կախեթունը. . . .	100	—
Կոկոնը Նուխվայ (լոմ.)	45	—
Ցրիզոնը (լաստ) Ագուլեաց	55	—
Կոֆէն մօկի. . . .	27	—
» լիվանի . . .	22	..
» մարտինիկոյինը	20	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան . .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . .	4	
Գերմանիա . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱՀԱՐԶԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վերայի վրա № 38)

Ծննդկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ. Առանձին սենեակներում ամիսը 30—50 ռուբլ. կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, $9^1/_2$ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Ա. անով.

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովո (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովո. .	1. 29	11. 57
Ռիոն . . .	6. 47	
Փոթի . . .	9. 40	

	առաւօտ.
Փոթիից . .	9. 13
Ռիոն . . .	12. 13
Միխայլովո. .	5. 39
Գօրի. . . .	7. 5
Թիֆլիս. . .	9. 31

1	37
4	8
7	56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիոն. . .	9.	6. 75	3. 75
Փոթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ	կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա . . .	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Վէրմիչեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և ականջի հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիչեվ ներքին հ. Բէյլս աչքի հ. 9—11 ժամ, Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան։

Չորեքշաբթի. Վէրմիչեվ ներքին հ. Բակստ կրծքային և ջղային։

Հինգշաբթի. Վէրմիչեվ ներքին հ. Գավրոնսկիյ կանանց և մանկաբարձութեան, 9—10 ժամ, Բակստ վենեական և կաշու հ. Օբրեխտ ատամնացաւեր։

Ուրբաթ. Վէրմիչեվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիչեվ ներքին հ. Բէյլս աչքերի հ. Բակստ կրծքային և ջղային հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ՆՈՐ-ԱՂԱՍԱՖԱ. Ա. Ռ. Տ. Ա. Դուք գրուած էիք կէս տարով. երկրորդ կէսի համար պէտք է վճարէք 6 ռուբլ և ոչ թէ 4։ Առաջին կէս տարվանը նմանպէս դեռ չենք ստացել։ Անենք աւելորդ պաշտօնեաներ չունենք, որ մի քանի ռուբլիների համար մանածենք զանազան խանութներ։ Կամ ուղղակի խմբագրութեանը ուղարկեցէք կամ պատուիրեցէք, որ իրանք հասցնեն։ Կուղարկենք «Մշակ» մինչև յուլիսի վերջը։

—ՎԱՂԱՐՇԱՊԱՏ. Ճշմարտախօս։ Տուէք ձեր յօդուածը «Արարատ» ամսագրին տպելու համար։ Նրա կարդացողները սովոր են մարսել այդպիսի գրուածքներ։ Մենք տեղ չունենք։

—ՍՏԱՎՐՕՊՕԼ. Ց. Ատացանք նամակը, երևի կը ֆտպենք։

Дозволено Цензурою 4 Іюля Тифлисъ 1878 г Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ